

ՀՏԴ 349:61(07)
ԳՄԴ 67.4+5g7
Ս 259

Հրատարակության է երաշխավորել Մեհրաբյանի անվան
բժշկական քոլեջի մեթոդական խորհուրդը 2025թ.
Խմբագրությամբ՝ ՀՊՏՀ դոցենտ, իրավ.գիտ.թեկ.
Գ.Մ.Գրիգորյանի:

Լեզվաբան խմբագիր՝
Ձեռնարկի շապիկի ձևավորումը՝

ՄԲՔ դասախոս Հ.Գ.Մուրադյան
ՄԲՔ դոցենտ Ա.Ս.Հակոբյան

Սարգսյան Տ.Հ.

Ս 259 Բժշկական իրավունք: Ուսումնական ձեռնարկ /
Տ.Հ.Սարգսյան,-Եր.,: Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ, 2025: – 51 էջ:

«Բժշկական իրավունք» ուսումնամեթոդական ձեռնարկը կազմվել է քոլեջում գործող ուսումնական պլանին, առարկայական ծրագրին և Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ տեսական և պրակտիկ փորձի հիման վրա: Այն նպատակ ունի մատչելի կերպով ներկայացնել բժշկական իրավունքի բարդ և բազմաշերտ ոլորտը, գործնական կիրառությանը և այդ բնագավառում ծագող իրավաբանական խնդիրները:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել ոչ միայն ուսանողների, այլև բուժաշխատողների և առողջապահության ոլորտի մասնագետների համար՝ իրավական գիտելիքներն ամրապնդելու և մասնագիտական գործունեություն առավել իրավաչափ կազմակերպելու համար:

ՀՏԴ 349:61(07)
ԳՄԴ 67.4+5g7

ISBN 978-9939-1-2142-0

© Սարգսյան Տ. Հ, 2025

Բժշկական իրավունք



«Բժշկական իրավունք» ձեռնարկը պատրաստվել է 20 տարվա մանկավարժական, 10 տարվա իրավաբանական և 5 տարվա դատական փորձագիտական գործունեության արդյունքում: Այս աշխատությամբ ցանկանում եմ ընթերցողին ներկայացնել բժշկական իրավունքի կարևորագույն սկզբունքներն ու խնդիրները՝ շեշտելով, որ իրավունքը միայն օրենքների ժողովածու չէ, այլ նաև միջոց՝ մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու, ինչպես նաև նրա ոտնահարված իրավունքները վերականգնելու համար»:

Հարգանքով՝ ԵՊՄՀ մանկավարժության մագիստրոս, ԳԱԱ

ԳՄԿ իրավագիտության մագիստրոս, դասախոս

ԵԴՓՀԻ իրավագետ, դատական փորձագետ

Տիգրան Հարությունի Սարգսյան

Երևան

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ

2025

Բովանդակություն

Խոսք ուսանողին (նախաբանի փոխարեն)	4
---	---

ԳԼՈՒԽ 1. Իրավունքի հիմունքներ և սկզբունքներ

1.1. Իրավագիտության հիմունքներ	5 - 7
1.2. Իրավունքի աղբյուրներ	7 - 10
1.3. Իրավունքի սկզբունքներ	10 - 12
1.4. Իրավական ընտանիքներ	13 - 14
1.5. Իրավունքի հասկացությունը և հիմնական հատկանիշները	15 - 17

ԳԼՈՒԽ 2. Մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը

2.1. Մարդու իրավունքները և դրանց պաշտպանության ձևերը.....	18 - 20
2.2. Մարդու իրավունքների համակարգը և տարրերը	20 -21
2.3. Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները	21 - 23

ԳԼՈՒԽ 3. Առողջապահական իրավունքի հիմունքներ

3.1. Առողջապահական իրավունքի առարկան և նշանակությունը	24 - 24
3.2. Առողջապահության ոլորտի հիմնական իրավական կարգավորումները	25 - 26
3.3. Բժշկական օգնության տեսակները և կարգավորումները	26-39
3.4. Բժիշկների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները..	30 - 32
3.5. Պացիենտների իրավունքներն ու պարտականությունները	33 - 33

ԳԼՈՒԽ 4. Իրավական պատասխանատվության տեսակները

4.1. Քրեական պատասխանատվություն	35 - 36
4.2. Վարչական պատասխանատվություն	36 - 38
4.3. Քաղաքացիական պատասխանատվություն	38 - 41
4. 4. Քաղաքացիական իրավախախտումներ	33 – 34
Եզրակացություն	42 - 42
Հավելվածներ	43 - 45
Բժշկական բառարան	46 - 48
Լատիներեն տերմիններ	49 - 50

Ձեռնարկի նպատակը.

«Բժշկական իրավունք» ձեռնարկի հիմնական նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել բժշկական իրավունքի հիմունքները և դրանց գործնական կիրառությունը՝ լուսաբանելով ինչպես բուժաշխատողների, այնպես էլ պացիենտների իրավական խնդիրները և փոխհարաբերությունները: Այն նպատակ ունի զարգացնել բժշկության ոլորտում ուսանողների իրավական մտածողությունը :

Ու՞մ համար է նախատեսված.

«Բժշկական իրավունք» ձեռնարկը նախատեսված է բժշկական կրթություն ստացող այն ուսանողների համար, ովքեր ցանկանում են խորացնել իրենց գիտելիքները բժշկական իրավունքի ոլորտում և կիրառել իրավական դրույթներն իրենց ապագա պրակտիկ գործունեության ընթացքում: Այն կարող է օգտակար լինել նաև գործող բուժաշխատողների և առողջապահության ոլորտի այլ մասնագետների համար:

Ի՞նչ կտա ձեռնարկը ուսանողներին.

- Հիմնարար գիտելիքներ բժշկական իրավունքի մասին. կծանոթացնի բժշկական իրավունքի հիմնական հասկացություններին, սկզբունքներին և դրույթներին:
- Պացիենտների իրավունքների ամբողջական ըմբռնում. կօգնի հասկանալ և պաշտպանել պացիենտների իրավունքները առողջապահական համակարգում:
- Բժշկական սխալների իրավական գնահատում և պատասխանատվություն. կներկայացնի բժշկական սխալների տեսակները, դրանց իրավական գնահատման մեխանիզմները և բուժաշխատողների պատասխանատվության հիմքերը:
- Իրավական մտածողության զարգացում. կնպաստի իրավական մտածողության ձևավորմանը և իրավական խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը բժշկական ոլորտում:

Խոսք ուսանողին (նախաբանի փոխարեն)

Սիրելի ուսանողներ,

Մարդու կյանքն ու առողջությունը՝ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական, հանդիսանում են բարձրագույն արժեքներ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրում է՝ «Մարդը բարձրագույն արժեք է¹», իսկ նրա իրավունքներն ու արժանապատվությունը անօտարելի են:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանմամբ՝ առողջությունը լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ է, այլ ոչ թե պարզապես հիվանդությունների կամ ֆիզիկական թերությունների բացակայություն²:

Ժամանակակից բժշկությունն արագ զարգանում է նոր տեխնոլոգիաների շնորհիվ, սակայն բժշկական սխալներն ու անբարեխիղճ օգնության դեպքերը հաճախ սպառնում են մարդկանց առողջությանը, երբեմն էլ՝ կյանքին:

Այս իրողությունը վկայում է այն մասին, թե որքան կարևոր է, որ դուք՝ մեր ապագա բուժաշխատողներդ՝ ձեռք բերեք բժշկական իրավունքի վերաբերյալ հիմնարար գիտելիքներ:

Վստահ եմ, որ իրավական իրազեկվածությունը կօգնի ոչ միայն ճիշտ կազմակերպել ձեր մասնագիտական գործունեությունը, այլև խուսափել սխալներից, կանխել կոնֆլիկտային իրավիճակներն ու պաշտպանել ձեր իրավունքները:

Թող այս ձեռնարկը դառնա ձեր հուսալի ուղեցույցը բժշկական իրավունքի բարդ, բայց անչափ կարևոր աշխարհում՝ հանուն արդարության և մարդկային առողջության պաշտպանության:

¹ 06.12.2015թ.-ին ընդունված ՀՀ Սահմանադրություն, հոդված 3

² 22.07.1946թ.-ին ընդունված Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանադրություն, երկրորդ պարբերություն

ԳԼՈՒԽ 1

Իրավունքի հիմունքներ և սկզբունքներ

1.1. Իրավագիտության հիմունքներ

Հասարակական հարաբերությունների բարդացման և անհատների փոխգործակցության աճին զուգընթաց՝ անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու որոշակի կանոններ, որոնք կկարգավորեին այդ հարաբերությունները և կապահովեին հասարակական կյանքի ներդաշնակությունը:

Այդ կանոններն ի սկզբանե հանդես էին գալիս սովորության իրավունքի տեսքով՝ փոխանցվելով սերնդեսերունդ, իսկ հետագայում՝ էվոլյուցիայի արդյունքում, դրանք ձևավորվեցին որպես օրենքներ³։ Օրենքները դասակարգվեցին երկու հիմնական տեսակի՝ գրված և չգրված:

Գրված օրենքների (կոդիֆիկացված իրավունքի) շարքին են դասվում պետական իրավասու մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը, որոնք ամրագրվում են պաշտոնական տեղեկագրերում:

Դրանք հստակորեն սահմանում են վարքագծի կանոններ՝ ուղղված սոցիալական հարաբերությունների կարգավորմանը: Որպես պատմական օրինակ կարելի է բերել Համաուրաբիի օրենսգրքի այն դրույթը, որ «Եթե մարդը մարդու ոսկորը կտորի, նրա ոսկորը պետք է կտորվի⁴», կամ օրինակ, Հայրական իշխանության հայտնի արտահայտությունը՝ «Հայրն իրավունք ունի կյանքի կամ մահվան իր երեխաների նկատմամբ⁵», բժշկությանը մոտ մեկ այլ օրինակ է այն, որ «Ոչ ոք չպետք է թաղվի կամ այրվի քաղաքի ներսում⁶»: Այս և այլ նման կանոնները, ամրագրվելով գրավոր աղբյուրներում, դարձան հասարակության պարտադիր նորմեր և հենց սրանք էլ կոչվեցին օրենքներ:

³ «Իրավագիտության հիմունքներ. Վարչական իրավունք», Տ. Սարգսյան, 2022թ.

⁴ Համաուրաբիի օրենսգիրք (Մ.թ.ա. մոտ 1754 թ., Բաբելոն)

⁵ Տասներկու տախտակների օրենքներ (Մ.թ.ա. մոտ 451-450 թթ., Հին Հռոմ), patria potestas

⁶ Տասներկու տախտակների օրենքներ (Մ.թ.ա. մոտ 451-450 թթ., Հին Հռոմ), առողջապահական և հիգիենիկ նորմ:

Չգրված օրենքները կամ սովորության իրավունքը բնորոշվում էր որպես պրակտիկայում երկարատև կիրառման արդյունքում ձևավորված կանոնների ժողովածու: Այս դեպքում «սովորույթ» եզրույթի ներքո հասկացվում էր մարդկանց այն համընդհանուր և պարտադիր վարքը, որը մի սերնդից փոխանցվում էր մյուսին՝ դառնալով անբաժանելի մաս հասարակական կյանքից Օրինակ՝ աղջկա կողմից օժիտ տանելու սովորույթը դարեր շարունակ գործող չգրված կանոն էր, որն ի դեպ, մինչ օրս պահպանվում է:

Ահա ևս մի քանի օրինակներ, որոնք ցույց են տալիս չգրված կանոնների դերը տարբեր հասարակություններում.

«Տունը Աստծուն է պատկանում, և հյուրին»⁷: Այսինքն՝ ցանկացած հյուր, ով մտնում էր տուն, գտնվում էր տանտիրոջ անվերապահ պաշտպանության ներքո, և նրան վնասելը կամ դավաճանելը համարվում էր ամենածանր հանցանքներից մեկը, որը կարող էր հանգեցնել արյունահեղության:

«Չվարվեք ուրիշների հետ այնպես, ինչպես չեք ցանկանում, որ ձեզ հետ վարվեն»⁸ կանոնը (Shu) լայնորեն տարածված չգրված բարոյական սկզբունք էր, որը հիմնված էր բարոյականության, ընտանեկան հարգանքի (ֆիլիալ բարեպաշտություն՝ xiao) և հասարակական կարգի վրա, դարեր շարունակ գործել է որպես Չինաստանի չգրված սոցիալական և էթիկական օրենսգիրք:

«Ինչ տեսնեմ կամ լսեմ բուժման ժամանակ կամ նրանից դուրս մարդկանց կյանքում, ինչը երբեք չպետք է հրապարակվի, ես կպահեմ գաղտնի՝ դա համարելով սուրբ գաղտնիք»⁹

Այսպիսով, իրավունքի երկու հիմնական տեսակների՝ գրվածի և չգրվածի, փոխհարաբերությունն ու էվոլյուցիան հիմք դրեցին ժամանակակից իրավական համակարգերին՝ ապահովելով հասարակության կայուն և կարգավորված զարգացումը: Այս դրույթները հստակորեն ցույց են տալիս, թե ինչպես են հնագույն հասարակությունները ձգտել կարգավորել իրենց հանցագործությունները, սեփականության հարաբերությունները, ընտանեկան կյանքը և սոցիալական վարքագիծը՝ դրանց տալով պարտադիր ուժ՝ անկախ գրավոր ամրագրումից

⁷ Ալբանական Լեքե Դուկաշինիի կանոն, Հյուրընկալության անձեռնմխելիություն

⁸ Կոնֆուցիոսական բարոյական նորմեր (Հին Չինաստան, Կոնֆուցիոսի ուսմունք): «Զրույցներ և դատողություններ», «Անալեկտներ», մ.թ.ա. 551-479 թթ.:

⁹ Miles, Steven H. The Hippocratic Oath and the Ethics of Medicine. Oxford University Press, 2004

Հենց այս համատեքստում է, որ իրավագիտությունն ուսումնասիրում է իրավունքի տարբեր դրսևորումները, նրա դերը հասարակությունում և պետության մեջ: Մասնավորապես, այն անդրադառնում է նաև նորմատիվ ակտերին, որոնց միջոցով կարգավորվում են հասարակական հարաբերությունները:

Իրավունքի բազմաշերտ բնույթը հասկանալու համար՝ նրա հասկացությունը դիտարկվում է երկու հիմնական մոտեցումներով՝

- **Նորմատիվ մոտեցում**- դիտարկում է իրավունքը որպես նորմերի (կանոնների) ամբողջություն, այսինքն՝ զրված օրենքներ, որոնք հիմնված են որոշակի իրավական սկզբունքների վրա:
- **Սոցիալական մոտեցում**- դիտարկում է իրավունքը որպես հասարակության կողմից ժամանակի ընթացքում ընդունված արժեքների ու վարքականոնների համակարգ, այսինքն՝ չգրված օրենքներ կամ սովորույթներ:

Եզրափակելով՝ կարևոր է ընդգծել, որ իրավունքը ոչ միայն պետության կողմից ստեղծված և ամրագրված կանոնների համակարգ է, այլև հասարակության զարգացման ընթացքում ձևավորված արժեքների և սովորույթների ամբողջություն: Բժշկական ոլորտում, ինչպես ցույց տվեցինք օրինակներով, իրավական նորմերը (ինչպես պացիենտի իրավունքները) և չգրված էթիկական սկզբունքները (ինչպես գաղտնիության պահպանումը) փոխլրացնում են միմյանց՝ ապահովելով ինչպես իրավական պաշտպանություն, այնպես էլ մասնագիտական բարոյականություն և վստահություն բուժառու-բժիշկ հարաբերություններում: Սա ընդգծում է իրավագիտության հիմնարար դերը ցանկացած կարգավորված հասարակության, այդ թվում՝ բժշկական հանրույթի գործունեության մեջ:

1.2. Իրավունքի աղբյուրներ

Իրավունքի տեսությունը հնարավորություն է տալիս հասկանալ իրավունքի էությունն ու գործելու սկզբունքները՝ միաժամանակ բացահայտելով իրավունքի աղբյուրները: Դրանք այն կոնկրետ ձևերն են, որոնց միջոցով իրավական նորմերը

ստեղծվում և ուժի մեջ են մտնում՝ կազմելով իրավական համակարգի հիմքը: Դրանք ներառում են՝

- ✓ **Օրենսդրություն՝** իրավունքի հիմնական աղբյուր, որը ներառում է պետական իրավասու մարմինների կողմից ընդունված գրավոր ակտեր, ինչպիսիք են օրենքները, դեկրետները և հրամանները: Օրենսդրությունը սահմանում է ընդհանուր և պարտադիր կանոններ, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունները: Այս համատեքստում կարևոր է նշել ՀՀ Սահմանադրությունը՝ որպես պետության բարձրագույն իրավական ուժ ունեցող փաստաթուղթ¹⁰:
- ✓ **Նորմատիվ ակտեր՝** պետական մարմինների կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտեր, որոնք մանրամասնում և կոնկրետացնում են օրենքների դրույթները: Դրանց օրինակներն են նախագահի հրամանագրերը, կառավարության որոշումները և տարբեր գերատեսչությունների կանոնակարգերը: Նորմատիվ ակտերը կարևոր դեր ունեն օրենքների գործնական կիրառման ապահովման գործում:
- ✓ **Դատական նախադեպեր՝** իրավունքի աղբյուրի ուժ ունեցող կոնկրետ գործով որևէ դատարանի որոշում: Չնայած ռոմանո-գերմանական իրավահամակարգում (որի անդամ է նաև Հայաստանը) նախադեպերն ավելի քիչ նշանակություն ունեն, քան անգլո-սաքսոնականում, այնուամենայնիվ, դատական որոշումները, հատկապես բարձրագույն ատյանների կողմից կայացվածները, կարող են ուղղորդող դեր ունենալ և ազդել տվյալ ոլորտի ստանդարտների կամ իրավական մոտեցումների վրա: Դրանք օգնում են իրավունքի միասնական կիրառմանը:

Նախադեպային իրավունքի վառ օրինակ է ԱՄՆ-ում «Քանթերբերի ընդդեմ Սփենսի» գործը (USA, Canterbury v. Spence, 1972 թ.), որը նախադեպային նշանակություն ունեցավ տեղեկացված համաձայնության (informed consent) իրավական սկզբունքի զարգացման գործում՝ շեշտը դնելով հիվանդի ինքնորոշման իրավունքի վրա և սահմանելով բժշկի՝ տեղեկատվություն տրամադրելու պարտականության չափը¹¹:

¹⁰ ՀՀ Սահմանադրություն, 5-րդ հոդված՝ Իրավական նորմերի աստիճանակարգությունը

¹¹ Canterbury v. Spence, 464 F.2d 772 (D.C. Cir. 1972): (Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հավելված 1):

✓ **Բարոյականություն և սովորույթ**՝ որոշ դեպքերում բարոյական նորմերը և հասարակության մեջ արմատացած սովորույթները կարող են դիտարկվել որպես իրավունքի աղբյուր՝ հատկապես այն դեպքերում, երբ գրավոր օրենսդրության մեջ բացեր կան կամ պահանջվում է իրավական մոտեցումների ավելի լայն մեկնաբանություն: Սրանք հաճախ արտացոլում են հասարակության ընդհանուր արժեքները և կարող են ազդել օրենքների ձևավորման և կիրառման վրա:

Օրինակ՝ Չինաստանում ավանդական բժշկության պրակտիկաները կարգավորվում են հազարամյակների սովորույթներով և ժողովրդական գիտելիքներով՝ զուգահեռ ժամանակակից գրավոր օրենսդրությանը¹²:

Նաև իսլամական իրավակարգում Շարիաթի օրենքները (կրոնական նորմերը) հանդիսանում են իրավունքի հիմնարար աղբյուր, ինչպես օրինակ՝ դիաթը (արյան փող)՝ բժշկական սխալի հետևանքով պատճառված վնասի համար¹³:

Իրավական ակտերը իրավունքի հիմնական դրսևորումներն են, որոնց միջոցով իրավական նորմերը դառնում են պարտադիր կիրառման համար: Դրանք տարբերվում են իրենց իրավաբանական ուժով, ընդունման կարգով և կարգավորման շրջանակով: Առանձնացվում են իրավական ակտերի հետևյալ հիմնական տեսակները՝

- **Օրենքներ**՝ իրավական ակտերի ամենաբարձր իրավաբանական ուժ ունեցող տեսակներ, որոնք ընդունվում են օրենսդիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Օրենքները կարգավորում են հասարակական կյանքի ամենակարևոր հարաբերությունները և սահմանում են քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի դրույթները պարտադիր են բոլորի համար և ունեն ուղղակի գործողություն:
- **Ենթաօրենսդրական իրավական ակտեր**՝ ընդունվում են գործադիր իշխանության մարմինների կողմից օրենքների հիման վրա և օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով:

¹² Չինաստանում ավանդական բժշկության պրակտիկաների կարգավորումը սովորույթներով

(Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հավելված 2):

¹³ Դիաթի (արաբերեն՝ ذی) հասկացությունը և դրա կիրառությունը բժշկական անփութության դեպքում՝ իսլամական իրավունքում (Շարիաթ): (Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հավելված 3):

- **Կարգեր (Կանոնակարգեր)**՝ նորմատիվ իրավական ակտեր, որոնք սահմանում են որոշակի գործունեության կամ հարաբերությունների իրականացման մանրամասն ընթացակարգեր և կանոններ: Դրանք հաճախ ընդունվում են գերատեսչությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ իրենց իրավասության շրջանակներում: Կարգերը նպատակ ունեն մանրամասնորեն կարգավորելու կոնկրետ հարցեր և ապահովելու օրենքների արդյունավետ կիրառումը:

Այսպիսով, իրավունքի տեսությունն օգնում է մեզ հասկանալ, թե ինչպես է իրավունքն առաջանում, և ինչու է այն այդքան կարևոր մեր կյանքում: Այդ գիտելիքը մեզ տանում է դեպի իրավունքի աղբյուրները, ինչպիսիք են՝ օրենքները, կառավարության որոշումները, դատական նախադեպերը կամ նույնիսկ ընդունված բարոյական սկզբունքները: Այս աղբյուրներն էլ իրենց հերթին մարմնավորվում են իրավական ակտերի՝ օրենքների, հրամանների և կարգերի տեսքով: Յուրաքանչյուր նման ակտ, իր հստակ ուժով, կարգավորում է մեր հասարակության տարբեր ոլորտները, և հատկապես կարևոր է բժշկության մեջ, որտեղ այն ապահովում է հստակ կանոններ և պաշտպանում թե՛ բժիշկների, թե՛ հիվանդների իրավունքները:

1.3. Իրավունքի սկզբունքներ

Իրավունքը մարդկային հասարակության կյանքը կարգավորող կարևորագույն գործոններից է: Այն ապահովում է արդարություն, անվտանգություն և կայունություն հասարակության մեջ:

Իրավունքի տեսությունը գիտություն է, որն ուսումնասիրում է իրավունքի էությունը, ծագումը, գործառույթները, կառուցվածքը և զարգացման օրինաչափությունները: Ինչպես նշում է Ներսեսյանցը՝ «Իրավունքի տեսությունը սոցիալական գիտություն է»[1, էջ 3]: Այն փորձում է պատասխանել այնպիսի հիմնարար հարցերի, ինչպիսիք են՝ «Ի՞նչ է իրավունքը», «Ինչպե՞ս է այն ծագում»,

«Որո՞նք են իրավունքի նպատակները», և «Ինչպե՞ս է այն տարբերվում այլ սոցիալական նորմերից (օրինակ՝ բարոյականությունից կամ կրոնից)»: Իրավունքի տեսությունը հիմք է հանդիսանում իրավունքի բոլոր ճյուղերի համար և օգնում է հասկանալու իրավական համակարգի ընդհանուր սկզբունքներն ու փոխկապակցվածությունը [1, էջ 155]:

Իրավունքի գործունեությունն ու արդյունավետությունը հիմնված են որոշակի սկզբունքների վրա, որոնք ապահովում են դրա արդարացիությունը, կայունությունը և համապատասխանությունը հասարակական արժեքներին: Դրանցից առանցքայիններն են.

- ❖ **Օրինականություն**-իրավունքի գերակայության սկզբունք, որի համաձայն ինչպես պետական մարմինները և պաշտոնատար անձինք, այնպես էլ քաղաքացիները, պարտավոր են գործել օրենքի շրջանակներում: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով¹⁴ [1, հոդված 6]: Բժշկական իրավունքի համատեքստում սա նշանակում է, որ բժշկական օգնությունը և սպասարկումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով և նորմերով:
- ❖ **Արդարություն**-այս սկզբունքը ենթադրում է, որ իրավական կարգավորումները պետք է լինեն անաչառ և հավասարապես կիրառվեն բոլորի նկատմամբ՝ առանց խտրականության: Բժշկության մեջ արդարությունը դրսևորվում է առողջապահական ծառայությունների մատչելիության, բժշկական սխալների դեպքում պատասխանատվության և փոխհատուցման արդարացի մոտեցումներով:
- ❖ **Հավասարություն**-ապահովում է քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև և ունի հավասար իրավունքներ՝ անկախ սեռից, ռասայից, կրոնից, սոցիալական դիրքից կամ այլ հատկանիշներից Խտրականությունը, նշված հիմքերով արգելվում է [1, հոդված 29]: Առողջապահության ոլորտում սա նշանակում է, որ յուրաքանչյուրը պետք է հավասար հնարավորություն ունենա

¹⁴ [1] ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, 29 և 3

օգտվելու բժշկական ծառայություններից և պաշտպանված լինի բժշկական օրենսդրությամբ:

❖ **Մարդասիրություն**- շեշտը դնում է մարդու կյանքի, առողջության և արժանապատվության բարձրագույն արժեքի վրա: Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է [1, հոդված 3]: Այս սկզբունքը հատկապես կարևոր է բժշկական իրավունքում, քանի որ այն պարտավորեցնում է բժշկական անձնակազմին, ելնելով հիվանդի լավագույն շահերից, գործել՝ պահպանելով էթիկական նորմերը և ապահովելով հարգալից վերաբերմունք:

❖ **Պարտականությունների և պատասխանատվության անխուսափելիություն**- սահմանում է, որ յուրաքանչյուր իրավունքի հետ գալիս է նաև պարտականություն, իսկ իրավական նորմերի խախտումը ենթադրում է պատասխանատվություն: Բժշկական ոլորտում սա վերաբերում է ինչպես բժիշկների (մասնագիտական պարտականություններ, բժշկական գաղտնիքի պահպանում), այնպես էլ հիվանդների (օրինակ՝ բուժման ընթացքում համագործակցություն) պարտականություններին, ինչպես նաև բժշկական սխալների կամ անփութության դեպքում՝ օրենքով սահմանված պատասխանատվությանը:

Այս սկզբունքները հանդիսանում են իրավական համակարգի հիմնաքարերը, որոնք ապահովում են դրա ոչ միայն ձևական, այլև բովանդակային արդարությունը:

Դրանց ուղղորդում են իրավունքի մշակումը, կիրառումը և մեկնաբանությունը՝ երաշխավորելով մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության կայուն զարգացումը:

Բժշկական իրավունքի համատեքստում այդ սկզբունքների հստակ դրսևորումն ու պահպանումը կենսական նշանակություն ունեն թե՛ առողջապահական համակարգի արդյունավետության, թե՛ հիվանդների անվտանգության և բժշկական էթիկայի բարձր չափանիշների ապահովման համար:

1.4. Իրավական ընտանիքներ

ՀՀ Սահմանադրությունն իր առաջին հոդվածում միանգամից սահմանում է ժողովրդավարական ամենակարևոր կանոնը. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»¹⁵ : Այս սահմանումն անմիջականորեն տարածվում է բժշկական իրավունքի վրա՝ ապահովելով պետության՝ սեփական առողջապահական օրենքներ ունենալու իրավունքը (ինքնիշխանություն), քաղաքացիների՝ առողջության պահպանման և տեղեկացված համաձայնության իրավունքը (ժողովրդավարություն), առողջապահական ծառայությունների մատչելիությունն ու որակը (սոցիալականություն), և օրենքի գերակայությունը բժիշկների ու հիվանդների հարաբերություններում՝ երաշխավորելով իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը (իրավականություն)։

Այս սահմանադրական հիմքի վրա կառուցված իրավական համակարգերը աշխարհում պայմանականորեն բաժանվում են մի քանի ընտանիքների՝ կախված տարբեր իրավական համակարգերի հիմքից։ Դրանք են՝

- ❖ **անգլո-սաքսոնական իրավահամակարգ** - հիմնականում տարածված է անգլիական և ամերիկյան իրավական համակարգերում, որտեղ հիմնական իրավունքի աղբյուրը նախադեպային իրավունքն է (այսինքն՝ դատական որոշումները հանդիսանում են օրենքի աղբյուր)։
- ❖ **ռոմանո-գերմանական իրավահամակարգ** - այս համակարգում հիմնական մոտեցումը կոդիֆիկացված օրենսդրությունն է (օրենսգրքեր, օրենքներ և այլն)։ Օրինակ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածը («Բժշկական անփութություն») և ՀՀ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը¹⁶։
- ❖ **իսլամական իրավակարգ** - հիմնված է Շարիաթի օրենքների՝ կրոնական նորմերի վրա։

¹⁵ ՀՀ Սահմանադրություն, 1-ին հոդված

¹⁶ ՀՀ Քրեական օրենսգիրք, հ. 167; ՀՀ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենք։ (Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հավելված 4)։

❖ աշխարհիկ կամ սովորական իրավակարգ-ներառում է երկրի համընդհանուր իրավական համակարգը՝ հիմնված ինչպես գրավոր օրենքների, այնպես էլ սովորույթների վրա:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի անդամ, պատմականորեն դրսևորել է իրեն՝ որպես զարգացած իրավական երկիր՝ սկսած Ուրարտուի ժամանակաշրջանի վարչական կանոններից և Արտաշես Ա-ի «Արտաշեսյան օրենքներից» մինչև Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»։ Այս հարուստ ժառանգությունը հպարտության առիթ է և պարտավորեցնում է յուրաքանչյուր քաղաքացու լինել օրինապաշտ։

Այս ամուր իրավական հիմքի վրա է կառուցված պետական կառավարման համակարգը, որտեղ պետությունը հանդես է գալիս՝ որպես կոռ կառուցվածք իր բոլոր կառույցներով։ Իշխանության բաժանումը գործադիր, օրենսդիր և դատական թևերի միջև, ապահովում է նրա գործունեության օրինականությունն ու արդյունավետությունը, ինչը երաշխավորում է իրավունքի գերակայությունը բոլոր ոլորտներում, այդ թվում առողջապահության՝ դրանով իսկ ամրապնդելով քաղաքացիական հասարակության հիմքերը։

Այսպիսով, իրավական ընտանիքների ուսումնասիրությունը՝ սկսած անգլոսաքսոնական նախադեպերից մինչև իսլամական Շարիաթի նորմերը և ավանդական սովորույթների դերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ որպես ռոմանո-գերմանական իրավահամակարգի մաս կազմող ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության Սահմանադրական հիմքերը, վերջնականապես ընդգծում է բժշկական իրավունքի կարևորությունը՝ ապահովելով ինչպես բժիշկների, այնպես էլ բազմաշերտ իրավական միջավայրում հիվանդների իրավունքների և պարտականությունների հստակ կարգավորումն ու պաշտպանությունը :

1.5. Իրավունքի հասկացությունը և հիմնական հատկանիշները

Իրավունքը մարդկային հասարակության կարգավորման կարևորագույն համակարգերից մեկն է: Այն կարելի է սահմանել որպես «բոլորի համար պարտադիր, հավասարապես պարտադիր նորմերի համակարգ»¹⁷, որոնք սահմանվում և պաշտպանվում են պետության կողմից՝ հասարակական հարաբերությունները կարգավորելու և քաղաքացիների վարքագիծը ուղղորդելու համար: Իրավունքը ոչ միայն սահմանում է թույլատրելի և անթույլատրելի վարքագիծ, այլև ապահովում է արդարություն, անվտանգություն և կայունություն հասարակության մեջ:

Իրավունքի ծագման և էության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր տեսություններ, որոնք փորձում են բացատրել դրա դերն ու նշանակությունը հասարակության մեջ:

- **Բնական իրավունքի տեսություն**– համաձայն այս տեսության՝ մարդը և քաղաքացին ի ծնե օժտված է անձեռնմխելի բնական իրավունքներով (կյանքի իրավունք, ազատության իրավունք, հավասարություն և այլն), որոնք չի կարելի փոփոխել կամ վերացնել: Օրենքները համապատասխանում են մարդկանց բարոյական սահմանումներին և չեն կարող գոյություն ունենալ առանց դրանց:
- **Պատմական տեսություն** - համաձայն այս տեսության՝ կյանքի հակասությունները լուծելու անհրաժեշտությունը բերում է իրավունքի առաջացմանը, որը հնարավորություն է տալիս վերացնել տարաձայնությունները և սահմանել մարդկանց վարքագծի կարգ: Իրավունքը նախ և առաջ ծագում է մարդու գիտակցության մեջ, այնուհետև ամրագրվում է օրենքներում: Իրավական նորմերը կարող են փոփոխվել, քանի որ փոփոխական են նաև կյանքի այն ոլորտները, որոնք կարգավորվում են:
- **Նորմատիվ տեսություն**– համաձայն այս տեսության՝ պետությունը թելադրում է մարդկանց վարքագծի մոդելներ: Իրավունքը բխում է պետությունից և հանդիսանում է նորմերի բուրգաձև համակարգ [1, էջ 155]:

¹⁷ Ներսեսյանց, Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն. Երևան, Նաիրի, 2001, էջ 10

Իրավական նորմերը գործնական կիրառություն են ստանում իրավական ակտերի միջոցով, որոնք հանդիսանում են իրավունքի հիմնական դրսևորումները: Դրանք տարբերվում են իրենց իրավաբանական ուժով, ընդունման կարգով և կարգավորման շրջանակով: Առանձնացվում են իրավական ակտերի հետևյալ հիմնական տեսակները՝

- ✓ **օրենքներ**՝ իրավական ակտերի ամենաբարձր իրավաբանական ուժ ունեցող տեսակներ, որոնք ընդունվում են օրենսդիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Օրենքները կարգավորում են հասարակական կյանքի ամենակարևոր հարաբերությունները և սահմանում քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի դրույթները պարտադիր են բոլորի համար և ունեն ուղղակի գործողություն:
- ✓ **հրամաններ**՝ իրավական ակտեր, որոնք ընդունվում են գործադիր իշխանության մարմինների կողմից (օրինակ՝ նախագահի, կառավարության կամ նախարարությունների)՝ օրենքների կիրարկումն ապահովելու և իրենց լիազորությունների շրջանակում կոնկրետ հարցեր կարգավորելու համար: Հրամանները պետք է համապատասխանեն օրենքներին և չհակասեն դրանց:
- ✓ **կարգեր (կանոնակարգեր)**՝ իրավական ակտեր, որոնք սահմանում են որոշակի գործունեության կամ հարաբերությունների իրականացման մանրամասն ընթացակարգեր և կանոններ: Դրանք հաճախ ընդունվում են գերատեսչությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ իրենց իրավասության շրջանակներում: Կարգերը նպատակ ունեն մանրամասնորեն կարգավորելու կոնկրետ հարցեր և ապահովելու օրենքների ու հրամանների արդյունավետ կիրառումը:

Իրավունքի հասկացության և նրա ծագման վերաբերյալ քննարկված տեսությունները, ինչպես նաև իրավական ակտերի տարբեր տեսակները, բացահայտում են իրավական համակարգի բարդ կառուցվածքը և դրա կենսական դերը հասարակության կարգավորման գործում: Դրանք մեզ օգնում են հասկանալու, թե ինչպես է իրավունքն առաջանում, և ինչու է այն այդքան կարևոր մեր կյանքում՝

որպես հասարակական հարաբերությունների հիմնական կարգավորիչ: Իրավական ակտերը, լինելով իրավունքի գործնական դրսևորումը, ապահովում են նորմերի կիրառումը և երաշխավորում մարդու իրավունքների պաշտպանությունը՝ հատկապես բժշկական ոլորտում, որտեղ դրանք հստակ կանոններ են սահմանում և պաշտպանում են թե՛ բժիշկների, թե՛ հիվանդների իրավունքները:

Այսպիսով, իրավունքի հիմունքների և սկզբունքների խորքային ուսումնասիրությունը բացահայտում է դրա անքակտելի կապը հասարակական կյանքի հետ և դերը՝ որպես կարգավորման, արդարության և կայունության հիմնասյուն: Իրավունքը, իր բազմաթիվ դրսևորումներով՝ սկսած հնագույն սովորույթներից մինչև ժամանակակից կոդիֆիկացված օրենքները, և իր հիմնարար սկզբունքներով՝ օրինականությունից մինչև մարդասիրություն, կենսական նշանակություն ունի ցանկացած կազմակերպված հասարակության գործունեության համար: Հատկապես՝ բժշկական ոլորտում, որտեղ մարդկային կյանքն ու առողջությունը գերագույն արժեքներ են, իրավական համակարգի ամբողջական ըմբռնումը և դրա անսասան կիրառումը ապահովում են թե՛ պացիենտների անվտանգությունը, թե՛ բժշկական անձնակազմի պատասխանատվությունը և թե՛ ոլորտի արդյունավետ ու էթիկական զարգացումը:

ԳԼՈՒԽ 2

Մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը

2.1. Մարդու իրավունքները և դրանց պաշտպանության ձևերը

Ժողովրդավարական երկրներում լայն ճանաչում է գտել իրավունքների բաժանումը երկու հիմնական խմբերի՝ մարդու և քաղաքացու իրավունքների: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու պարտականությունները կազմում են անձի իրավական կարգավիճակի հիմքը: Դրանց մի մասն ամրագրված են Սահմանադրությամբ՝ որպես բարձրագույն արժեք ունեցող իրավունքներ, իսկ մյուսները՝ ընթացիկ օրենսդրությամբ¹⁸:

Սահմանադրությամբ իրավունքների ամրագրումը պայմանավորված է դրանց կարևորությամբ: Սահմանադրությունը պաշտպանում է հատկապես կարևոր իրավունքները, որոնք ապահովում են մարդու արժանապատիվ կյանքը և պետության ժողովրդավարական բնույթը: Մարդը, լինելով քաղաքացիական հասարակության անդամ, ի ծնե ունի բնական իրավունքներ, որոնք պետությունը պարտավոր է ճանաչել և ամրագրել իր սահմանադրության մեջ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, փոփոխությունների է ենթարկվել 2005թ-ին և 2015թ-ին)՝ Երկրի հիմնական կամ Մայր օրենքը, սահմանում է պետության կառուցվածքը, իշխանության մարմինների փոխհարաբերությունները և մարդու ու քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Այն ամրագրում է Հայաստանը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, որտեղ գործում են ժողովրդավարության սկզբունքները, քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև, իշխանությունների տարանջատումը և մարդու արժանապատվության, կյանքի, առողջության, ազատության և սեփականության պաշտպանությունը:

Հատկապես բուժաշխատողի համար Սահմանադրությունն ունի առանցքային նշանակություն, քանի որ այն հիմք է առողջապահության ոլորտի ամբողջ իրավական դաշտի համար:

Ահա ՀՀ Սահմանադրության հիմնական հոդվածները, որոնք ուղղակիորեն առնչվում են առողջապահական իրավունքին.

- **Հոդված 25.** Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիություն. յուրաքանչյուր մարդ ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Սա նշանակում է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել բժշկական կամ այլ փորձերի առանց իր ազատ և հստակ համաձայնության, և նրան պետք է նախապես տեղեկացվեն հնարավոր հետևանքները: Հոդվածը հաստուկ արգելում է եվգենիկական փորձերը, մարդու օրգանները շահույթի աղբյուր դարձնելը և կլոնավորումը, ինչը կարևոր է բժշկական էթիկայի համար:
- **Հոդված 31.** Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիություն. այս հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Բժշկության մեջ սա նշանակում է հիվանդի անձնական տվյալների գաղտնիության պահպանում և նրա մասնավոր կյանքին չմիջամտելը՝ պահպանելով բժշկական գաղտնիքի սկզբունքը:
- **Հոդված 85.** Առողջության պահպանություն. սա հիմնարար հոդված է առողջապահության համար, որն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքը: Հոդվածը նաև նշում է, որ օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը, ինչը պետության պարտավորությունն է՝ ապահովելու որակյալ և մատչելի բժշկական ծառայություններ բոլոր քաղաքացիների համար:
- **Հոդված 86.** Պետության քաղաքականության հիմնական նպատակները. այս հոդվածը սահմանում է պետության կարևորագույն նպատակները սոցիալական ոլորտում, այդ թվում՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններիին ստեղծումը: Այն նաև ընդգծում է հաշմանդամության կանխարգելման, բուժման, վերականգնման և հաշմանդամների՝ հասարակական կյանքին մասնակցության խթանման կարևորությունը:

Այս հոդվածները կազմում են Հայաստանի առողջապահության իրավական հիմքը՝ երաշխավորելով քաղաքացիների առողջության իրավունքը, բուժաշխատողների համար Սահմանադրության իմացությունը կարևոր է հատկապես իրենց պարտականությունները պատշաճ կատարելու համար:

2.2. Մարդու իրավունքների համակարգը և տարրերը

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները բավականին մեծաթիվ են և խայտաբղետ՝ իրենց բովանդակությամբ: Մարդու որոշ իրավունքներ կոչված են նպաստելու նրա նյութական և հոգևոր կարիքների բավարարմանը, ուրիշները՝ այլոց միջամտությունից նրա անձնական կյանքի ինտիմ կողմերի ապահովմանը : Կան նաև այնպիսի իրավունքներ և ազատություններ, որոնք կոչված են նպաստելու անձի հասարակական և քաղաքական ակտիվության իրականացմանը, երկրի քաղաքական կյանքին մասնակցությանը: Այդ բոլոր իրավունքները և ազատությունները իրենց համակցությամբ կոչված են ապահովելու մարդու ազատությունը և անվտանգությունը, ամենից առաջ, իշխանությունների կամայականություններից¹⁹:

Սահմանադրական իրավունքը ուսումնասիրում և կարգավորում է պետության կառուցվածքը, իշխանության մարմինների գործունեությունը և մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Այն ամբողջ իրավական համակարգի հիմքն է:

Սահմանադրական իրավունքի հիմնական աղբյուրը ՀՀ Սահմանադրությունն է, որը կարգավորում է պետության կազմակերպման առանցքային սկզբունքները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությունը (օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածով ամրագրված առողջության պահպանման իրավունքը): Բուժաշխատողը պարտավոր է գործել սահմանադրական սկզբունքներին համապատասխան՝ հարգելով յուրաքանչյուր անձի իրավունքները:

Սահմանադրական իրավունքի կարևորագույն առանձնահատկությունը նրա գերակա բնույթն է, ինչը նշանակում է, որ բոլոր օրենքներն ու ենթաօրենսդրական

¹⁹ Նորիկ Այվազյան, «Իրավունքների և ազատությունների դասակարգումը (1)», էջ 1

ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Սա ուղղակիորեն հանգեցնում է օրենքների աստիճանակարգությանը՝ ըստ իրավաբանական ուժի:

1. ՀՀ Սահմանադրություն (բարձրագույն իրավական ուժ)
2. Միջազգային պայմանագրեր (վավերացված Հայաստանի կողմից)
3. Օրենսգրքեր (օրինակ՝ Վարչական, Քաղաքացիական, Քրեական)
4. Օրենքներ (ընդունված Ազգային ժողովի կողմից)
5. Ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (որոշումներ, հրամաններ, կարգադրություններ և այլն)

Սահմանադրական իրավունքի իմացությունը կարևոր է բուժաշխատողների համար՝ մասնագիտական գործունեության ընթացքում իրավաչափ և էթիկական բարձր ստանդարտներին համապատասխան գործելու համար:

2.3. Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները

Մարդու իրավունքների պաշտպանությունը բազմաշերտ գործընթաց է, որը ներառում է իրավական, ինստիտուցիոնալ, վարչական և հասարակական միջոցներ՝ խախտումները կանխարգելելու, արձանագրելու և վերականգնելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական տարրերն ու մեխանիզմներն են՝

1. **համընդհանրություն**– մարդու իրավունքները վերաբերում են բոլոր անձանց՝ անկախ ազգությունից, սեռից, կրոնից կամ սոցիալական կարգավիճակից
 - Օրինակ. Յուրաքանչյուր հիվանդ իրավունք ունի ստանալու անհրաժեշտ բժշկական օգնություն և խնամք առանց որևէ խտրականության:
2. **անօտարելիություն**– մարդու իրավունքները ի ծնե տրված են և չեն կարող հետ վերցվել կամ չեղարկվել:
 - Օրինակ. Նույնիսկ անգիտակից վիճակում գտնվող հիվանդի կյանքի, առողջության և արժանապատվության իրավունքները մնում են անխախտելի:
3. **ամբողջականություն և անբաժանելիություն**– բոլոր իրավունքները (քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և այլն) փոխկապակցված են և ունեն հավասար կարևորություն:

- Օրինակ. Հիվանդի առողջության իրավունքը կապված է նրա մասնավոր կյանքի անձեռնմխելիության և տեղեկացված համաձայնություն տալու իրավունքի հետ: Չի կարելի ապահովել մեկը՝ խախտելով մյուսը (օրինակ՝ անթույլատրելի է բժշկական միջամտություն կատարել առանց հիվանդի համաձայնության):
- 4. **իրավական պաշտպանություն**– պետությունը պետք է ստեղծի օրենսդրական, դատական և վարչական մեխանիզմներ՝ իրավունքների իրացումը և խախտումների վերականգնումն ապահովելու համար:
 - Օրինակ. Եթե հիվանդի իրավունքը խախտվում է (օրինակ՝ մերժում են բժշկական օգնություն), նա կարող է դիմել դատարան, Առողջապահության նախարարություն կամ Մարդու իրավունքների պաշտպանին:
- 5. **Պարտականությունների առկայություն**– իրավունքներին զուգահեռ կան նաև պարտականություններ:
 - Օրինակ. Բժիշկը, բուժելու իրավունք ունենալով, կրում է նաև մասնագիտական պարտականություններ (բուժման արդյունավետություն, անվտանգություն, գաղտնիության պահպանում): Հիվանդը պարտավոր է հետևել բժշկի ցուցումներին և տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն:

Մարդու իրավունքների պաշտպանության համակարգը բաղկացած է ներպետական (Սահմանադրություն, օրենքներ, դատարաններ, Մարդու իրավունքների պաշտպան) և միջազգային (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ՄԱԿ-ի մարմիններ) մեխանիզմներից:

- Իրավական մեխանիզմները ներառում են օրենսդրական հիմքը (ՀՀ Սահմանադրություն, «Բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենք) և դատական պաշտպանությունը:
- Վարչական և ինքնավար մարմինները ներառում են Մարդու իրավունքների պաշտպանին (Օմբուդսման) և մասնագիտացված տեսչական ու վերահսկիչ մարմիններին (օրինակ՝ Առողջապահության նախարարության տեսչական մարմիններ):
- Միջազգային իրավական մեխանիզմները կարևոր են, երբ ազգային մեխանիզմները բավարար չեն (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը):

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու ՁԼՄ-ները կարևոր դեր են խաղում՝ խախտումները բացահայտելու և հանրությանը իրազեկելու գործում:
- Կրթական և կանխարգելիչ մեխանիզմները (բժշկական համալսարաններում «Բժշկական իրավունքի» դասավանդում, մասնագիտական վերապատրաստումներ) բարձրացնում են իրավագիտակցությունը և օգնում կանխելու խախտումները:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Մարդու իրավունքների բնագավառում գործում է միջազգային համաձայնագրերի համակարգ, որոնցով սահմանված են իրավունքների և ազատությունների համամարդկային ստանդարտներն ու դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմները: Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում վավերացվելուց կամ հաստատվելուց հետո և ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են. եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը²⁰:

Արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է, որ բոլոր այս բաղադրիչները գործեն ներդաշնակորեն, ինչում բուժաշխատողներն ունեն առանցքային դեր: Նրանց պարտականությունն է ակտիվորեն մասնակցել մարդու իրավունքների պաշտպանության մշակույթի ձևավորմանը, քանի որ հենց նրանք են հիվանդների հետ առաջնային շփման կետը:

Այսպիսով, մարդու հիմնարար իրավունքները, մասնավորապես առողջության հետ կապված, ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ և պաշտպանվում են բազմաթիվ ազգային ու միջազգային մեխանիզմներով, ինչի իմացությունը կարևոր է յուրաքանչյուր բուժաշխատողի համար՝ պատշաճ և էթիկական մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:

²⁰ ՀՀ Սահմանադրական իրավունք, Ն.Ա. Այվազյան, Երևան, 2000, էջ 233

ԳԼՈՒԽ 3

Առողջապահական իրավունքի հիմունքներ

3.1. Առողջապահական իրավունքի առարկան և նշանակությունը

Առողջապահության համակարգը երկրի սոցիալական ոլորտի կարևորագույն բաղադրիչներից է: Հանրային առողջապահությունը գիտական ուղղություն է, որը վերաբերում է մարդկանց առողջության պահպանմանը, վերականգնմանը և հիվանդությունների կանխարգելմանը՝ իրականացվող կազմակերպչական ջանքերի միջոցով: Այս ջանքերը ամրապնդվում են օրենսդրական կարգավորումներով, կանխարգելիչ ծրագրերով, սոցիալական և կրթական միջոցառումներով, ինչպես նաև բժշկական հաստատությունների ու հասարակության մասնակցությամբ²¹:

Առողջապահական (կամ բժշկական) իրավունքը իրավունքի միջգործառութային ճյուղ է, որը կարգավորում է առողջության պահպանման, բժշկական օգնության մատուցման, առողջապահական ծառայությունների կազմակերպման և բուժաշխատողների ու պացիենտների փոխհարաբերություններին վերաբերող իրավական հարաբերությունները: Այն հիմնվում է մի քանի իրավական ոլորտների՝ քաղաքացիական, վարչական, աշխատանքային, քրեական և սահմանադրական իրավունքի նորմերի վրա²²:

Այս ճյուղի հիմնական նպատակը մարդու առողջության իրավունքի ճանաչումն ու դրա պաշտպանության իրավական մեխանիզմների ձևավորումն է: Այն նաև նպաստում է բժշկական ծառայությունների որակի բարելավմանը՝ ընդգրկելով առողջապահական համակարգի բոլոր մակարդակները՝ սկսած պետական քաղաքականությունից մինչև պացիենտի անձնական տվյալների պաշտպանություն:

Այսպիսով՝ առողջապահական իրավունքը միջգործառութային իրավական ճյուղ է, որն ապահովում է մարդու առողջության իրավունքի պաշտպանությունը և կարգավորում է առողջապահական համակարգի արդյունավետ գործառույթը:

²¹ Դեղագործության կազմակերպում եվ էկոնոմիկա, Գ.Ս. Վերմիշյան, Երևան, 2024թ. էջ 5

²² Учебное пособие. Медицинское право. 2022г, Стр. 5

3.2. Առողջապահության ոլորտի հիմնական իրավական կարգավորումները

Առողջապահական իրավունքն ունի բազմադարյա պատմություն և դասվում է սոցիալ-տնտեսական իրավունքների համակարգին: Այն իրավական ճյուղ է, որը կարգավորում է առողջապահության ոլորտի պետական և հասարակական հարաբերությունները՝ ապահովելով բոլոր քաղաքացիների առողջության պաշտպանությունն ու բժշկական ծառայությունների մատչելիությունը:

Մարդու առողջության պահպանումը ամրագրված է Սահմանադրությամբ և համարվում է ոչ միայն անհատի հիմնարար իրավունք, այլև ազգային հարստություն: Առողջ բնակչությունն անհրաժեշտ նախապայման է երկրի տնտեսության զարգացման, հասարակության կայունության և ազգի բարգավաճման համար:

Հանրային առողջապահության հիմնարար հասկացություններից են «մարդու առողջությունը» և «հիվանդությունը», և իրավական դաշտում դրանք ընկալվում են տարբեր մակարդակներում՝

- Անհատական — առանձին մարդու առողջություն,
- Խմբային — սոցիալական կամ փոքր էթնիկ խմբերի առողջություն,
- Տարածաշրջանային — վարչատարածքային միավորի (մարզի, քաղաքի, շրջանի) բնակչության առողջություն,
- Հանրային — աշխարհի, մայրցամաքի կամ առանձին երկրի ամբողջ բնակչության առողջություն²³:

Առողջության բնորոշման հարցում կարևոր դեր ունի Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), ըստ որի՝

Առողջությունը ֆիզիկական, հոգեկան և սոցիալական ամբողջական բարօրության վիճակ է և ոչ միայն հիվանդության կամ ֆիզիկական թերության բացակայություն²⁴:

²³ Դեղագործության կազմակերպում եվ Էկոնոմիկա, Գ.Ս. Վերմիշյան, Երևան, 2024թ., էջ 7

²⁴ Առողջապահության համաշխարհային կազմակերպության Սահմանադրության նախաբանի 1948 թ. 7 ապրիլի կանոնադրություն, էջ 1

Առողջապահական իրավունքը սահմանում է պարտադիր նորմեր, որոնք վերաբերում են ինչպես պետական կառույցներին և առողջապահական հաստատություններին, այնպես էլ մասնավոր կազմակերպություններին, բուժաշխատողներին և քաղաքացիներին: Այս նորմերը արտահայտվում են կանոնադրական օրենքներով, վարչական և կարգավորող ակտերով, պայմանագրերով, ինչպես նաև նախադեպային և սովորական իրավունքի սկզբունքներով:

Այս նորմատիվ իրավական հիմքը նպատակ ունի ստեղծել մեխանիզմներ, որոնք ապահովում են առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և բժշկական օգնության մատչելիության արդյունավետ համակարգ:

Այսպիսով՝ առողջապահական իրավունքը ոչ միայն ապահովում է բժշկական ծառայությունների մատչելիությունն ու առողջության իրավունքի իրականացումը, այլև հանդիսանում է հիմնասյուն պետական առողջապահական քաղաքականության մշակման, առողջապահական համակարգի կազմակերպման և հանրային առողջության պաշտպանության գործընթացում: Այն ձևավորում է նորմատիվ իրավական հիմք, որը կարգավորում է պետական մարմինների, բուժհաստատությունների, բուժաշխատողների և քաղաքացիների իրավահարաբերությունները՝ միաժամանակ աջակցելով սոցիալական արդարության իրականացմանը, հիվանդությունների կանխարգելմանն ու առողջ կենսակերպի խթանմանը:

3.3. Բժշկական օգնության տեսակները և կարգավորումները

ՀՀ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա բժշկական օգնության տեսակները դասակարգվում են՝ ըստ մատուցման բնույթի, կազմակերպման ձևի և նպատակի:

1. Ըստ մատուցման բնույթի՝

Առաջնային բժշկական օգնություն - ամենամատչելի, հասարակության բոլոր շերտերի համար հասանելի բուժօգնությունն է, որը ներառում է՝ կանխարգելիչ, ախտորոշիչ, խորհրդատվական և բուժական ծառայություններ: Մատուցվում է պոլիկլինիկաներում, առողջության կենտրոններում, ընտանեկան բժիշկների կողմից:

Մասնագիտացված բժշկական օգնություն - տրվում է նեղ մասնագիտացում ունեցող բժիշկների կողմից՝ երկրորդային մակարդակում: Ներառում է մասնագիտացված ախտորոշում, բուժում և վերահսկում, օրինակ՝ սրտաբանություն, նյարդաբանություն, գինեկոլոգիա:

Բարձր տեխնոլոգիական (գերմասնագիտացված) բժշկական օգնություն - ախտորոշման և բուժման բարդ մեթոդներ ու բժշկական տեխնոլոգիաներ օգտագործող օգնություն՝ վիրահատություններ, օրգանների փոխպատվաստում, ճառագայթային թերապիա և այլն: Սովորաբար իրականացվում է երրորդ մակարդակի համալսարանական կամ հանրապետական կենտրոններում:

2. Ըստ մատուցման ձևի՝

Շտապ բժշկական օգնություն - կյանքին կամ առողջությանը անմիջական վտանգ ներկայացնող դեպքերում տրամադրվող անհետաձգելի օգնություն՝ տեղում, տրանսպորտում կամ բժշկական հաստատությունում:

Ստացիոնար (հոսպիտալային) բժշկական օգնություն - տրվում է այն դեպքում, երբ բուժումը հնարավոր չէ կազմակերպել ամբուլատոր պայմաններում: Ներառում է հիվանդի շուրջօրյա հսկողություն, վիրահատություններ, վերակենդանացման միջոցառումներ և այլն:

Ամբուլատոր-պոլիկլինիկական օգնություն - բուժօգնություն առանց հիվանդի ստացիոնար բուժման՝ պոլիկլինիկայում, առողջության կենտրոնում կամ բժշկի կաբինետում:

Տնային պայմաններում բժշկական օգնություն - առաջարկվում է այն հիվանդներին, ովքեր չեն կարող կամ չպետք է տեղափոխվեն բուժհաստատություն: Ներառում է՝ տնային այցեր, տնային պայմաններում բուժում, խնամք:

3. Ըստ նպատակի՝

Կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) բժշկական օգնությունն ուղղված է հիվանդությունների առաջացման կանխմանը, վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը՝ պատվաստումների, ինչպես նաև համապատասխան սքրինինգային միջոցառումների միջոցով:

Վերականգնողական բժշկական օգնություն - ուղղված է հիվանդությունից հետո առողջության վերականգնմանը: Ներառում է՝ ֆիզիոթերապիա, բուժական մարմնամարզություն, հոգեբանական աջակցություն:

Պալիատիվ բժշկական օգնություն - տրվում է կյանքի վերջնափուլի կամ անբուժելի հիվանդությամբ տառապող մարդկանց՝ ցավը և այլ տառապանքները մեղմելու նպատակով: Ուղղված է կյանքի որակի բարելավմանը:

ՀՀ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի հիման վրա բժշկական օգնությունը դասակարգվում է տարբեր մակարդակների՝ ըստ մատուցման կարգի, պայմանների և նպատակի, ինչը ապահովում է բուժօգնության բազմազանությունը և հասանելիությունը բնակչության բոլոր շերտերի համար, իսկ այս կազմակերպման իրավական հիմքը հստակեցված է համապետական և ոլորտային իրավական ակտերում:

ՀՀ-ում առողջապահության ոլորտը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով՝ ձևավորելով առողջապահական իրավունքի հիմնական հենքը:

- Սահմանադրական կարգավորում՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքը:
- Սահմանադրական և ոլորտային օրենքներ՝
 - «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը (1996 թ.) սահմանում է բուժօգնության տեսակները, մատուցման սկզբունքները, ինչպես նաև հիվանդների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները:
 - «Բնակչության առողջության պահպանման մասին» ՀՀ օրենքը (1992 թ.) ուղղված է կանխարգելիչ բժշկության զարգացմանը և առողջապահական ծրագրերի իրականացմանը:
 - Առանձնահատուկ կարգավորում են նախատեսում նաև «Արյան դոնորության և արյան ծառայության մասին», «Մարդկային վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», «Հոգեկան առողջության մասին» ՀՀ օրենքները և այլ ոլորտային ակտեր:
- Ենթաօրենսդրական ակտեր՝ առողջապահության նախարարի հրամանները, կառավարության որոշումները, բուժօրհանությունների կազմակերպման և ֆինանսավորման կարգերը կազմում են առողջապահության իրավական կարգավորման գործնական հիմքը: Դրանք սահմանում են, օրինակ՝ բուժական չափորոշիչներ, հիվանդների ուղեգրման և ընդունման ընթացակարգեր, պետական

պատվերով տրամադրվող ծառայությունների շրջանակը, պաշտոնական սակագները և սոցիալական փաթեթները:

- Միջազգային նորմեր և պարտավորություններ՝ ՀՀ-ն անդամակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների և վավերացրել է բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որոնք ուղղակիորեն կիրառելի են ազգային առողջապահական իրավունքի համակարգում: Դրանց թվում են՝
 - ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (Universal Declaration of Human Rights) ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 10-ին:
 - Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (International Covenant on Civil and Political Rights) ընդունվել է 1966թ. դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ մտել է 1976թ. մարտի 23-ին:
 - Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (International Covenant on Economic, Social and Cultural Rights) ընդունվել է 1966թ. դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ մտել է 1976թ. հունվարի 3-ին:
 - Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights) ընդունվել է 1950թ. 4 նոյեմբերի՝ Փարիզում, ուժի մեջ է մտել 1953թ. 3 սեպտեմբերի:
 - Եվրոպական սոցիալական խարտիա (European Social Charter) ընդունվել է 1961թ. հոկտեմբերի 18-ին՝ Տրիեստում, ուժի մեջ է մտել 1965թ. 26 փետրվարի:
 - Բժշկական էթիկայի և մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիաներ, ինչպիսիք են՝ Հելսինկյան հայտարարագիր՝ բժշկական հետազոտությունների էթիկայի հիմունքների վերաբերյալ (Declaration of Helsinki, 1964), ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ընդհանուր պակտում՝ մարդու կենսազանգվածի պաշտպանությունը (Universal Declaration on Bioethics and Human Rights, 2005), Եվրոպական բժշկական էթիկայի կոնվենցիա (Oviedo Convention, 1997) և այլն:

Այսպիսով՝ Բժշկական օգնության կազմակերպումը և մատուցումը ՀՀ-ում հիմնված է բազմաշերտ իրավական կարգավորման վրա, որը միավորում է ներքին օրենսդրական ակտերը և միջազգային նորմերը՝ նպատակ ունենալով պաշտպանել յուրաքանչյուր մարդու առողջության իրավունքն ու ապահովել որակյալ, հասանելի բժշկական ծառայություններ:

3.4. Բժիշկների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները

Հայաստանի Հանրապետությունում բժիշկներն ու բուժաշխատողներն իրավունք ունեն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնել միայն լիցենզիա ստանալուց հետո, ինչը ներառում է համապատասխան կրթություն, որակավորում և շարունակական մասնագիտական զարգացում՝ ըստ ՀՀ «Բժշկական գործունեության մասին» օրենքի պահանջների:

Բժիշկների և բուժաշխատողների իրավունքները՝

- Մասնագիտական միավորումներին և ասոցիացիաներին անդամակցելու իրավունք - հնարավորություն է տալիս մասնակցելու առողջապահական ծրագրերի մշակմանը, լիցենզավորման գործընթացին, մասնագիտական աշխատանքի կազմակերպմանը և իրավունքների պաշտպանությանը:
- Պաշտպանել մասնագիտական համբավը, պատիվն ու արժանապատվությունը:
- Մասնագիտական գործունեության ապահովագրման իրավունք - պաշտպանություն՝ մասնագիտական սխալներից կամ բացթողումներից առաջացող ռիսկերից:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

- Ցուցաբերել անհետաձգելի առաջին բժշկական օգնություն՝ օրենքով սահմանված կարգով:
- Ապահովել մատուցվող բժշկական օգնության որակը և քանակը՝ համաձայն պետական չափանիշների և բուժօգնության կանոնակարգերի:
- Տրամադրել պացիենտին բժշկական տեղեկատվություն՝ ներառյալ բուժման տեսակները, մեթոդները, ծավալն ու կարգը:
- Տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ ցուցաբերված օգնության որակի, ծախսերի և քանակի մասին:
- Պահպանել բժշկական գաղտնիությունը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- Ներկայացնել վիճակագրական տվյալներ՝ ըստ պահանջի և օրենքի պահանջներին համապատասխան:

- Տաճել հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտների նկատմամբ:
- Իրավական և մասնագիտական չափանիշներին համապատասխան՝ իրականացնել գործունեությունը պացիենտի վարման գործընթացում և հետևել բուժհաստատության կանոնակարգերով սահմանված ընթացակարգերին:
- Լրացնել, վարել և պահպանել բժշկական փաստաթղթերը՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
- Կիրառել միայն Հայաստանում գրանցված և թույլատրված դեղամիջոցները:
- Շարունակաբար կատարելագործել մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները՝ մասնակցելով վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագրերին:
- Իրականացնել մասնագիտական գործունեություն՝ համապատասխան մասնագիտական բնութագրին և ոլորտային կանոններին:

Բուժաշխատողները պարտավոր են նաև՝

- Առաջնորդվել պացիենտի շահերով:
- Հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել:
- Տեղեկացնել պացիենտին առողջությանը վերաբերող բոլոր մանրամասների մասին:
- Կիրառել ՀՀ-ում գրանցված դեղեր:
- Լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը:
- Կատարելագործել իրենց մասնագիտական գիտելիքները և հմտությունները:
- Իրականացնել մասնագիտական գործունեությունը՝ համաձայն մասնագիտական բնութագրի և պացիենտի վարման գործելակարգերի:

Բուժաշխատողները և ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվող անձինք պատասխանատվություն են կրում իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի, ինչպես նաև առողջական վիճակի մասին տեղեկություններ հայտնելու համար՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ նորմատիվ իրավական այլ ակտերի²⁵:

²⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 25

Բժիշկները և բուժաշխատողները պարտավոր են լիցենզավորված հիմքով մատուցել որակյալ բուժօգնություն՝ պահպանելով մասնագիտական և իրավական պահանջները²⁶:

3.5. Պացիենտների իրավունքներն ու պարտականությունները

ՀՀ-ում բժշկական օգնությունն ու սպասարկումը դասակարգվում են երկու հիմնական տեսակի՝

➤ Առաջնային բժշկական օգնություն (ԱԲՕ)- ապահովում է կանխարգելիչ միջոցառումներ, պարզ ախտորոշում և քրոնիկ հիվանդությունների կառավարում՝ պետության կողմից երաշխավորված և անվճար հիմունքներով:

➤ Մասնագիտացված բժշկական օգնություն-ներառում է բարդ բուժման մեթոդներ, նեղ մասնագետների խորհրդատվություններ, վիրահատություններ և այլն՝ պետական պատվերով կամ վճարովի²⁷:

Պացիենտների պարտականություններն ուղղված են բուժման արդյունավետության բարձրացմանը և ներառում են՝

- ✓ լիարժեք տեղեկատվության տրամադրում,
- ✓ բուժման ռեժիմի պահպանում,
- ✓ բուժաշխատողների ու այլ պացիենտների իրավունքների հարգում²⁸:

Պացիենտների իրավունքները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ և ներառում են՝

1. բժշկի և բուժհաստատության ընտրության իրավունք,
2. հարգալից և հոգատար վերաբերմունք ստանալու իրավունք,
3. բուժումից հրաժարվելու հնարավորություն (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի),
4. տեղեկացված համաձայնություն և հիվանդության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու իրավունք,
5. բժշկական փաստաթղթերին ծանոթանալու և պատճեններ ստանալու իրավունք,

²⁶ «Բժշկական գործունեության մասին» ՀՀ օրենք

²⁷ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք

²⁸ «Պացիենտի իրավունքների մասին» կոնվենցիա (Oviedo Convention)

6. ցավի համարժեք կառավարում,
7. այցելուների ընդունում հիվանդանոցում գտնվելու ընթացքում,
8. երկրորդ կարծիք ստանալու իրավունք,
9. բողոքարկում և փոխհատուցում պահանջելու իրավունք²⁹:

3.6. Բժշկական գաղտնիք. Պահպանման սկզբունքները և իրավական պատասխանատվությունը

Բժշկական գաղտնիքը բժշկական, իրավական և սոցիալ-էթիկական հասկացություն է, որը արգելում է բուժաշխատողին երրորդ անձանց փոխանցել տեղեկություններ պացիենտի առողջական վիճակի, ախտորոշման, հետազոտությունների արդյունքների, բժշկին դիմելու փաստի և անձնական կյանքի մասին՝ առանց վերջինիս համաձայնության³⁰։ Այս արգելքը տարածվում է նաև այն անձանց վրա, ում այդ տեղեկությունները հայտնի են դարձել օրենքով սահմանված կարգով։

Բժշկական գաղտնիքի պաշտպանության հիմնական սկզբունքներն են՝

- ✓ Գաղտնիության պահպանում
- ✓ Ինֆորմացված համաձայնություն
- ✓ Իրավաչափ բացահայտում
- ✓ Անձնական տվյալների պաշտպանություն
- ✓ Մասնագիտական հիմնավորվածություն
- ✓ Տեղեկատվության սահմանափակում ըստ անհրաժեշտության
- ✓ Փաստաթղթերի անվտանգ պահպանություն
- ✓ Տվյալների շահարկման արգելք
- ✓ Մասնագիտական բարեձև վարք

Բժշկական գաղտնիքի խախտումն առաջացնում է՝

²⁹ ՀՀ ԱՆ նախարարի N 78-Ն հրաման՝ «Պացիենտների իրավունքների պահպանման» կարգի հաստատման մասին

³⁰ ՀՀ Քրեական Օրենսգիրք, 145-րդ հոդված

- Իրավական պատասխանատվություն՝ վարչական, քաղաքացիական կամ քրեական
- Էթիկական և կարգապահական պատասխանատվություն
- Սոցիալ-հոգեբանական հետևանքներ՝ վստահության կորուստ
- Հաստատության հեղինակության և իրավաբանական ռիսկերի աճ:

Բժշկական գաղտնիքի խախտումը կարգավորվում է ՀՀ Քրեական օրենսգրքի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքներով:

Այսպիսով, առողջապահական իրավունքը ոչ միայն ապահովում է առողջապահական ծառայությունների մատչելիությունն ու որակը, այլև հաստատում բժշկի և պացիենտի հարաբերությունների իրավական ու էթիկական սահմանները՝ դրանով իսկ ամրապնդելով հանրային առողջապահության համակարգի վստահելիությունն ու արդյունավետությունը:

ԳԼՈՒԽ 4

Իրավական պատասխանատվության տեսակները

Բժշկական ոլորտում պատասխանատվությունը բազմաշերտ է և կարող է դրսևորվել տարբեր իրավական դաշտերում՝ ապահովելով ինչպես պացիենտների իրավունքների պաշտպանությունը, այնպես էլ բուժաշխատողների մասնագիտական պարտականությունների պատշաճ կատարումը:

4.1. Քրեական պատասխանատվություն

Բժշկական քրեական իրավունքը քրեական իրավունքի այն ճյուղն է, որն ուսումնասիրում է բժշկական ոլորտում կատարված այն իրավախախտումները, որոնք կարող են դասակարգվել որպես հանցագործություն: Դրա հիմնական նպատակն է պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը բժշկական ծառայությունների մատուցման գործընթացում:

Քրեական սխալների դեպքերը

- Բուժսխալ կամ անփույթ բուժօգնություն, որը հանգեցրել է առողջության վնասման կամ մահվան: Օրինակ՝ վիրահատության ընթացքում գործիք թողնելը հիվանդի մարմնում կամ սխալ օրգանի հեռացումը, ինչպես նաև սխալ դեղորայքի նշանակումը կամ չափաբաժնի խախտումը, որի հետևանքով հիվանդի վիճակն ավելի է վատանում:
- Բժշկական գաղտնիքի բացահայտում՝ առանց հիվանդի համաձայնության:
- Անօրինական արքրտ կամ բժշկական միջամտություն՝ առանց համապատասխան գրավոր համաձայնության, բացառությամբ արտակարգ իրավիճակների կամ առանց իրավական հիմքի/թույլտվության իրականացվող սեռական ստերիլիզացիա:
- Փաստաթղթերի կեղծում, օրինակ՝ կեղծ ախտորոշում կամ բժշկական վկայագիր, ինչպես նաև մահվան փաստի կամ ախտորոշման կեղծում՝ շահադիտական կամ այլ նպատակով:
- Բուժում՝ առանց համապատասխան որակավորման կամ լիցենզիայի:

Բժշկական քրեական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքերում, երբ բուժաշխատողը խախտում է քրեական օրենսգրքով նախատեսված իր մասնագիտական պարտականությունները կամ օրենքով ամրագրված այլ կանոններ՝ դրանով իսկ վնաս հասցնելով հիվանդի կյանքին կամ առողջությանը: Այս պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքով և ունի ինչպես կանխարգելիչ, այնպես էլ պաշտպանական ու պատժիչ նշանակություն:

Պատասխանատվության տեսակները

Բժշկական աշխատողները կարող են ենթարկվել հետևյալ քրեական պատիժների՝ կախված խախտման բնույթից և հետևանքներից

- ազատազրկում՝ 1-ից 6 տարի կամ ավելին՝ ծանր դեպքերի դեպքում
- տուգանք՝ սահմանված չափով դրամական պատիժ
- հատուկ իրավունքի սահմանափակում՝ բժշկական գործունեության արգելում որոշ ժամկետով
- հանրային աշխատանքներ – որպես այլընտրանքային պատժատեսակ
- պայմանական դատապարտում – ազատազրկման փոխարեն, փորձաշրջանով

Օրինակ՝ Եթե բժիշկը ցուցաբերել է անփույթ մոտեցում, որի հետևանքով հիվանդը մահացել է, արդյունքում կարող է դատապարտվել մինչև 5 տարվա ազատազրկման, ինչպես նշվում է ՀՀ Քրեական օրենսգրքի հոդված 130-ում:

Բժշկական ոլորտում քրեական պատասխանատվությունը կիրառվում է այն դեպքերում, երբ բուժաշխատողի գործողությունները կամ անգործությունը հանգեցրել են հիվանդի կյանքին կամ առողջությանը վնասելուն կամ օրենքով սահմանված այլ կանոնների խախտմանը: Սա ներառում է բուժսխալները, բժշկական գաղտնիքի բացահայտումը, անօրինական միջամտությունները և փաստաթղթերի կեղծումը:

4.2. Վարչական պատասխանատվություն

Վարչական իրավունքը կարգավորում է այն իրավախախտումները, որոնք թեև հանցագործություն չեն, սակայն խախտում են հասարակական կամ պետական կարգը, քաղաքացիների իրավունքները կամ կառավարման սահմանված կարգը:

Վարչական պատասխանատվությունը կիրառվում է խախտումը կատարելու պահին գործող օրենսդրության հիման վրա:

Կարևոր է իմանալ

- Մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նախկինում կատարված խախտումների վրա:
- Պատասխանատվությունը խստացնող ակտերը հետադարձ ուժ չունեն:

Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում ցանկացած հակաիրավական, մեղավոր գործողություն կամ անգործություն (դիտավորյալ կամ անզգույշ), որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, եթե դրանք քրեական պատասխանատվություն չեն առաջացնում:

- Դիտավորությամբ կատարված վարչական իրավախախտում- անձը գիտակցել է իր գործողության հակաիրավական բնույթը, կանխատեսել վնասակար հետևանքները և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել դրանց առաջացումը:
- Անզգուշությամբ կատարված վարչական իրավախախտում-անձը կանխատեսել է վնասակար հետևանքների հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխել դրանք, կամ չի կանխատեսել, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել:

Բժշկի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ վարչական պատժամիջոցները, որոնք սահմանված են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և առողջապահական ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով՝

1. տուգանք - վարչական պատասխանատվության առավել հաճախ կիրառվող ձևն է, որը սահմանվում է օրենսդրությամբ՝ կախված խախտման բնույթից, հանգամանքներից և հետևանքներից: Օրինակ՝ բուժգործունեության համապատասխան լիցենզիայի բացակայությամբ ծառայություն մատուցելու համար կարող է նշանակվել զգալի տուգանք:

Տուգանքի չափը որոշվում է իրավախախտման հիմք հանդիսացած հոդվածի շրջանակում և կարող է տատանվել մի քանի տասնյակ հազարից մինչև հարյուր հազարավոր դրամներ:

2. նկատողություն (զգուշացում) - ամենամեղմ պատժամիջոցներից է և սովորաբար կիրառվում է, երբ խախտումը բնակչության առողջությանը վնաս չի բերել կամ եղել է փոքր նշանակության: Օրինակ՝ բժշկական փաստաթղթերի թերի կամ ուշ լրացում: Նպատակն է՝ բժշկին նախազգուշացնել հետագա խախտումներից խուսափելու մասին:

3. գործունեության ժամանակավոր կասեցում - այս պատժամիջոցը կիրառվում է ավելի լուրջ կամ համակարգային խախտումների դեպքում՝ հատկապես, երբ դրանք վտանգում են հիվանդների կյանքը կամ առողջությունը: Կասեցումը կարող է լինել որոշակի ժամկետով (օրինակ՝ մինչև թերությունների շտկումը): Սովորաբար իրականացվում է առողջապահական և աշխատանքի Տեսչական մարմնի կողմից:

4. լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում կամ որոշակի գործունեության արգելում - սահմանվում է ծայրահեղ դեպքում, երբ խախտումները կրկնվող են, դիտավորությամբ կատարված կամ առաջացրել են ծանր հետևանքներ: Բժիշկը կարող է զրկվել որոշակի ոլորտում բժշկական գործունեություն իրականացնելու իրավունքից: Սովորաբար ենթադրում է նաև դատարանի որոշում:

5. հանրային ծառայության իրավունքից ժամանակավոր զրկում - եթե բժիշկն աշխատում է պետական բուժհաստատությունում, ապա որոշ խախտումների պարագայում հնարավոր է կիրառել նաև այս տեսակի պատժամիջոց, որը նախատեսում է որոշակի ժամանակով պետական ծառայություն իրականացնելու արգելք:

Այս պատժամիջոցները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ համակցված՝ կախված իրավախախտման ծանրությունից: Բժիշկը իրավունք ունի բողոքարկել կիրառված պատժամիջոցը օրենքով սահմանված կարգով՝ վարչական դատարանում:

4.3. Քաղաքացիական պատասխանատվություն

Քաղաքացիական պատասխանատվության նպատակն է՝ վերականգնել բուժօգնության ընթացքում պատճառված վնասը: Այն կիրառվում է, երբ

բուժառայության արդյունքում անձի առողջությանը կամ գույքին վնաս է պատճառվել, որը ենթակա է փոխհատուցման: Այս պատասխանատվությունը կարող է վերաբերել ինչպես բուժաշխատողներին, այնպես էլ բուժհաստատությանը: Ընդհանուր առմամբ, պատասխանատվությունն իրականացնում է բուժհաստատությունը, սակայն որոշ դեպքերում հնարավոր է ռեգրեսային պահանջ կիրառել բուժաշխատողի նկատմամբ: Այս համակարգը նպատակ ունի հավասարակշռել բուժառայությունների մատուցման բնական ռիսկերը, հիվանդի իրավունքը՝ ստանալու պատշաճ փոխհատուցում,:

4.4. Քաղաքացիական իրավախախտումներ

Քաղաքացիական իրավախախտումը գործողություն կամ անգործություն է, որը հակասում է քաղաքացիական օրենսդրությանը և հանգեցնում է անձի իրավունքների խախտմանը կամ վնասի պատճառմանը: Առողջապահության ոլորտում դրանք կապված են բժշկական ծառայությունների մատուցման ընթացքի, կազմակերպչական կամ փաստաթղթային խնդիրների, ինչպես նաև հիվանդի իրավունքների իրացման սահմանափակման հետ: Ի տարբերություն քրեական կամ վարչական իրավախախտումների, քաղաքացիական իրավախախտումը ուղղված չէ պատժի իրականացմանը, այլ վնասի վերականգնմանը՝ քաղաքացիաիրավական մեխանիզմներով:

Առողջապահական ոլորտում տարածված քաղաքացիական իրավախախտումներ են՝

- ոչ պատշաճ բժշկական օգնություն՝ մասնագիտական ստանդարտներից շեղումներ, որոնք հանգեցրել են վնաս պատճառելուն:
- ախտորոշման ուշացում կամ սխալ մոտեցում բուժման գործընթացում
- բուժման անհիմն մերժում, հատկապես շտապ կամ անհետաձգելի օգնության դեպքում
- տեղեկատվության տրամադրման անբավարարություն, ինչը խոչընդոտում է գիտակցված համաձայնություն տալուն:
- բժշկական գաղտնիքի բացահայտում կամ առանց իրավական հիմքի հիվանդի վերաբերյալ տեղեկատվության փոխանցում երրորդ անձանց
- անձնական տվյալների պաշտպանություն չապահովելը
- բուժման ընթացքում առաջացած վնասի

փոխհատուցում

Քաղաքացիական իրավախախտումների դեպքում տուժած անձը կարող է դիմել դատարան՝ պահանջելով վնասի փոխհատուցում (ֆիզիկական, նյութական կամ բարոյական), իրավունքի վերականգնում (օրինակ՝ բուժօգնության տրամադրում) կամ չխախտված վիճակի վերականգնում, եթե հնարավոր է: Պատասխանատվության կրող սուբյեկտներ են՝

- բուժհաստատությունը, եթի իրավախախտումը տեղի է ունեցել դրա կազմակերպչական շրջանակում:
- բուժաշխատողը, եթե նա գործում է անհատական հիմքով (օրինակ՝ որպես ԱԶ):
- կոնկրետ իրավիճակներում՝ երրորդ անձինք, օրինակ՝ ապահովագրական ընկերությունները:

Քաղաքացիական իրավախախտումները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և չեն ենթադրում պատիժ, այլ միայն իրավունքի վերականգնում: Առողջապահական ոլորտում դրանք հաճախ պարզվում են դատական կարգով, ինչը պահանջում է փաստերի, փորձաքննության և մասնագիտական դիրքորոշման համադրություն:

Պացիենտի իրավունքների պաշտպանությունը առողջապահական համակարգի հիմնասյուններից է: Այն ապահովում է անձի ազատությունն ու արժանապատվությունը՝ բժշկական միջամտության, տեղեկացված որոշումների կայացման և բուժօգնության մատչելիության համատեքստում: Այս պաշտպանության մեխանիզմները նախատեսված են ինչպես ազգային օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով:

Պացիենտի իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը ներառում են՝

- ՀՀ Սահմանադրությունը
- ՀՀ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը
- ՀՀ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտեր
- մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան
- առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ուղեցույցները

Քաղաքացիական պատասխանատվությունը բժշկական ոլորտում ուղղված է

հիվանդին պատճառված վնասի փոխհատուցմանը և իրավունքների վերականգնմանը՝ ի տարբերություն քրեական կամ վարչական պատասխանատվության, որոնք նախատեսում են պատիժ: Այն կարող է կիրառվել ինչպես բուժաշխատողների, այնպես էլ բուժհաստատությունների նկատմամբ:

Ընդհանուր քաղաքացիական իրավախախտումները ներառում են ոչ պատշաճ բժշկական օգնություն, ախտորոշման ուշացում, բուժման անհիմն մերժում, տեղեկատվության անբավարարություն և բժշկական գաղտնիքի բացահայտում:

Պացիենտի իրավունքների պաշտպանությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի, ինչպես նաև միջազգային փաստաթղթերի վրա, ինչպիսիք են Եվրոպական մարդու իրավունքների կոնվենցիան և ԱՀԿ ուղեցույցները: Այս ամենը նպատակ ունի ապահովելու պացիենտի արժանապատվությունը, տեղեկացված որոշումները և որակյալ բուժօգնության մատչելիությունը:

Բժշկական ոլորտում պատասխանատվության բազմաթիվ տեսակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կառուցված է հիվանդների իրավունքների պաշտպանության և բժշկական էթիկայի հիմքի վրա: Քրեական պատասխանատվությունը կիրառվում է լուրջ իրավախախտումների դեպքում, որոնք վնասում են հիվանդի կյանքին կամ առողջությանը (օրինակ՝ բուժսխալներ, բժշկական գաղտնիքի բացահայտում), և ենթադրում է ազատազրկում կամ այլ քրեական պատիժներ: Վարչական պատասխանատվությունը վերաբերում է ավելի մեղմ խախտումներին կիրառելով տուգանքներ, նկատողություններ կամ գործունեության կասեցում: Իսկ քաղաքացիական պատասխանատվության հիմնական նպատակը հիվանդին պատճառված վնասի փոխհատուցումն է, այլ ոչ թե պատիժը, և այն ներառում է ոչ պատշաճ բուժօգնությունից մինչև տվյալների պաշտպանության խախտումներ: Բոլոր դեպքերում, պացիենտի իրավունքների պաշտպանությունն ապահովվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային օրենսդրությամբ՝ երաշխավորելով նրա արժանապատվությունը, տեղեկացված որոշումները և բուժօգնության մատչելիությունը:

Եզրակացություն

Բժշկական ոլորտի բարդ ու պատասխանատու աշխարհում, որտեղ մարդկային կյանքն ու առողջությունը գերագույն արժեքներ են իրավական գիտակցությունը դառնում է անքակտելի հիմք:

Ժամանակակից բժշկությունը, զարգանալով նորարարական տեխնոլոգիաներով, միաժամանակ բարձրացնում է պատասխանատվության աստիճանը՝ հաշվի առնելով բժշկական սխալների և անբարեխիղճ օգնության հնարավոր հետևանքները:

Այս ձեռնարկը ստեղծվել է ուղղորդելու բժշկական քոլեջի ուսանողներին, գործող բժիշկներին և առողջապահության բնագավառով հետաքրքրվող յուրաքանչյուր անձի պատասխանատվության բազմաշերտ հարթություններում: Այն նպատակ ունի ծանոթացնելու բժշկական իրավունքի հիմնական սկզբունքներին, դրանց գործնական կիրառությանը, ինչպես նաև այն իրավաբանական խնդիրներին, որոնց բախվում են բուժաշխատողներն ու պացիենտները: Ձեռնարկի միջոցով ուսանողները ձեռք կբերեն գիտելիքներ բժշկական իրավունքից, կկարողանան կիրառել իրավական ակտերը, պաշտպանել հիվանդների և հաստատությունների շահերը, և վարպետորեն տիրապետել իրավական մտածողությանը:

Հուսով ենք, որ այս ձեռնարկը կլինի ոչ միայն արժեքավոր ուսումնական նյութ, այլև հուսալի գործնական ուղեցույց՝ խորացնելով այն հասկացողությունը, թե ինչպես են իրավական նորմերն ու էթիկական սկզբունքները միահյուսվում՝ ապահովելով առողջապահական ծառայությունների անթերի որակը և պացիենտների անվտանգությունը: Թող այս գիտելիքը դառնա ուժ՝ ձևավորելու ավելի արդար և հուսալի բժշկական ապագա հայկական իրականության մեջ՝ հանուն արդարության և մարդկային առողջության պաշտպանության:

Հավելված 1

Գործի նկարագրություն. Ջերի Քանթերբերին վիրահատության է ենթարկվում դոկտոր Ուիլյամ Սփենսի կողմից՝ ողնաշարի վրա: Վիրահատությունից հետո Քանթերբերին ընկնում է մահճակալից և կաթվածահար է լինում: Նա հայց է ներկայացնում դոկտոր Սփենսի դեմ՝ պնդելով, որ իրեն չի տեղեկացվել վիրահատության հնարավոր ռիսկերի, այդ թվում՝ կաթվածի մասին: Դոկտոր Սփենսը պնդում էր, որ բժիշկը պարտավոր չէ բացահայտել այնպիսի ռիսկեր, որոնք կարող են հիվանդին անհանգստացնել և խոչընդոտել բուժմանը, հատկապես եթե այդ ռիսկերը շատ քիչ հավանական են: Կարևորությունը. Այս գործը նախադեպային նշանակություն ունեցավ տեղեկացված համաձայնության (informed consent) իրավական սկզբունքի զարգացման գործում: Դատարանը որոշեց, որ բժիշկը պարտավոր է բացահայտել բոլոր էական ռիսկերը այնպես, որ «միջին հիվանդը» կարողանա կայացնել իրազեկ որոշում՝ անկախ նրանից, թե բժիշկը կարծում է, որ այդ տեղեկատվությունը կարող է վնասել հիվանդին կամ ստիպել նրան հրաժարվել բուժումից: Սա շատ կարևոր շրջադարձ էր բժիշկ-հիվանդ հարաբերություններում՝ շեշտը դնելով հիվանդի ինքնորոշման իրավունքի վրա և սահմանելով բժշկի՝ տեղեկատվություն տրամադրելու պարտականության չափը: Այս որոշումը դարձավ հիմնաքար ամբողջ աշխարհի իրավական համակարգերում տեղեկացված համաձայնության սկզբունքը մեկնաբանելու և կիրառելու համար:

Հավելված 2

Աշխարհիկ կամ սովորական իրավակարգը ենթադրում է, որ իրավական կարգավորումները կարող են բխել ոչ միայն պետական մարմինների կողմից ընդունված գրավոր օրենքներից, այլև տվյալ հասարակության կամ որոշակի խմբի կողմից դարերով ձևավորված և պահպանված սովորույթներից ու ավանդույթներից Բժշկական ոլորտում դա հատկապես արտահայտված է ավանդական բժշկության պրակտիկաներում Օրինակ՝ Չինաստանում, թեև գոյություն ունի զարգացած ժամանակակից բժշկության իրավական շրջանակ, ավանդական չինական բժշկությունը (ԱԲ) (ներառյալ ասեղնաբուժությունը, բուսաբուժությունը և այլն) շարունակում է կարգավորվել բազմաթիվ սովորույթներով, ավանդույթներով և սերնդեսերունդ փոխանցված գիտելիքներով, որոնք հաճախ գրավոր չեն: Այս սովորույթները կարող են սահմանել բուժման մեթոդները, ախտորոշման սկզբունքները, բուժողի վարքագծի կանոնները և նույնիսկ հիվանդի իրավունքներն ու պարտականությունները՝ առանց որևէ կոնկրետ օրենքի, ուղղակի հղման: Չնայած դրանց ոչ ֆորմալ բնույթին՝ այս սովորույթները հաճախ ունեն պարտադիր ուժ տվյալ հանրույթի համար, և դրանց խախտումը կարող է հանգեցնել հասարակական դատապարտման կամ նույնիսկ մասնագիտական պրակտիկայից բացառման՝ անկախ պետական իրավական պատասխանատվությունից:

Դիաթի նկարագրություն և կիրառություն բժշկության մեջ. «Դիաթը» (արաբերեն՝ داء, արյան փող կամ հատուցում) իսլամական իրավունքի (Շարիաթ) հիմնական հասկացություններից մեկն է: Այն ենթադրում է ֆինանսական փոխհատուցում կամ վնասի հատուցում՝ մարդու մարմնին կամ կյանքին պատճառված վնասի համար (սպանություն, վիրավորանք, հաշմանդամություն և այլն): Դիաթի չափը կարող է տարբերվել՝ կախված պատճառված վնասի ծանրությունից, զոհի սեռից և կրոնական պատկանելությունից: Բժշկական ոլորտում դիաթը կիրառվում է այն դեպքերում, երբ բժշկական սխալի կամ անփութության հետևանքով հիվանդին վնաս է հասցվել: Օրինակ՝ Եթե Իրանում վիրահատության ընթացքում բժշկի անփութության պատճառով հիվանդի մոտ առաջանում է կյանքին վտանգ սպառնացող բարդություն կամ անդառնալի հաշմանդամություն, ապա բժիշկը, բացի հնարավոր քրեական պատասխանատվությունից, կարող է պարտավորվել վճարել դիաթ՝ որպես ֆինանսական փոխհատուցում տուժող հիվանդին կամ նրա ընտանիքին: Դիաթի չափը որոշվում է դատարանի կողմից՝ հաշվի առնելով Շարիաթի սկզբունքները և կոնկրետ վնասի տեսակը:

Բժշկական բառարան

/հիմնական իրավաբանական տերմինների պարզաբանմամբ/

1. Էթիկա (հունարեն *ethika*,՝ աղբյուր՝ *ethos* — սովորույթ, բարոյականություն, բնույթ)- փիլիսոփայական դասակարգ, որը ուսումնասիրում է բարոյականությունը և բարեկրթությունը: Բժշկական էթիկան պետք է հասկանալ որպես ընդհանուր էթիկայի հատուկ դրսևորում:

2. Բժշկական էթիկան- բժիշկների և բժշկական աշխատակիցների գործունեության մեջ բարոյական սկզբունքների կիրառումն է, ինչպես նաև նրանց բարձր մարդկային մոտեցումը յուրաքանչյուր մարդու նկատմամբ, ինչը կարևոր նախապայման է հաջող բուժման համար:

3. Դեոնտոլոգիա (հունարեն՝ *deon*՝ պարտավորություն, և *logos*՝ ուսում, բառացի թարգմանությամբ՝ պարտավորության ուսում)- էթիկայի մասն է, որի առարկան մարդու պարտքի զգացումն է այլ մարդու և հասարակության նկատմամբ ընդհանուր առմամբ:

4. Բժշկական դեոնտոլոգիան (որպես տեսակ)- էթիկական սկզբունքների և նորմերի համալիր է, որոնցով առաջնորդվում են բժիշկն ու բժշկական աշխատակիցները: Այն ներառում է համապատասխան մասնագիտական, բարոյահոգեբանական և իրավական սկզբունքներն ու կանոնները, որոնք կազմում են «բժշկական աշխատակցի պարտքի» հասկացությունը:

5. Բժշկական սխալ-բժշկի գործողություն կամ անգործություն, որը չի համապատասխանում պրոֆեսիոնալ ստանդարտներին և պատճառում է վնաս:

6. Բժշկական գաղտնիք -հիվանդի առողջական տվյալների պաշտպանություն, որը նախատեսում է դրանց բացահայտման բացառումը առանց հիվանդի համաձայնության:

7. Բժշկական պատասխանատվություն - բժշկի կամ բժշկական հաստատության իրավական պարտականությունը՝ պատասխանատվություն կրել հիվանդի հետ պատահած խնդիրների համար:

8. Բժշկական իրավունք - իրավունքի ճյուղ, որը կարգավորում է բժշկի, հիվանդի և առողջապահական կազմակերպությունների հարաբերությունները:

9. Սուտ մեղադրանք (False accusation) - մեղադրանք, որը սխալ կամ անվստահելի է, որի արդյունքում մարդիկ կարող են անարդարացիորեն դատվել:

10. Քրեական պատասխանատվություն (Criminal liability) - պատասխանատվություն, որն առաջանում է օրենքի խախտման համար և ենթադրում է պատիժ՝ տուգանք կամ ազատազրկում:

11. Ազատության սահմանափակում (Deprivation of liberty) - սահմանափակում անձի ազատության՝ նրան կալանավորելու կամ այլ ձևով ազատությունից զրկելու միջոցով:

12. Մեղավորություն (Guilt) - օրինական պատասխանատվություն մի մարդու կողմից մեկ այլ մարդու նկատմամբ կատարած հանցանքի համար:

13. Պաշտպանություն (Defense) - պատասխանող կողմի քայլերը ու փաստարկները, որոնք փորձ են արվում մերժել մեղադրանքը կամ մեղադրական կողմի վարկածը:

14. Ապացուցողական բժշկություն – (անգլ. Evidence-Based Medicine, EBM) բժշկության այն ուղղությունն է, որը հիվանդների բուժման և առողջության պահպանման գործում օգտվում է լավագույն հասանելի գիտական ապացույցներից՝ համադրելով դրանք կլինիկական փորձի և հիվանդի նախասիրությունների հետ:

15. Կոնսիլիում (լատ. Consilium) — բժշկական մասնագետների համատեղ խորհրդակցություն է, որի նպատակն է հիվանդի ախտորոշման և բուժման վերաբերյալ ընդունել օպտիմալ, գիտական և արդյունավետ որոշումներ::

16. Բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպություն (անգլիացիա, Societas Medica Professionalis Publica) – այն ոչ առևտրային միավորումն է, որը հավաքում է բժշկական մասնագետներին՝ իրենց մասնագիտական շահերն ու նպատակներն առաջ տանելու, իրենց իրավունքներն պաշտպանելու, բարձրակարգ մասնագիտական ստանդարտներ հաստատելու և բժշկության ոլորտում առաջընթաց ապահովելու նպատակով:

17. Բժշկական օգնության և սպասարկման ծառայություն (Servitium Auxilii et Curandi Medicinalis) – բոլոր գործողությունները, որոնք ուղղված են մարդու

առողջության պահպանմանը, վերականգնմանը և հիվանդությունների կանխարգելմանը՝ բժշկական և բուժական միջոցառումների միջոցով:

18. Բժշկական տեխնոլոգիա (Technologia Medica) – ընդգրկում է բոլոր սարքավորումները, մեթոդները և գործընթացները, որոնք օգտագործվում են հիվանդությունների ախտորոշման, բուժման, կանխարգելման և առողջության պահպանման համար: Այս տեխնոլոգիաները ներառում են նորագույն սարքեր, դեղամիջոցներ, վիրաբուժական մեթոդներ, լաբորատոր հետազոտությունների համակարգեր և տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են բժշկության որակի և արդյունավետության բարձրացմանը:

19. Բժշկական վերապատրաստում (Educatio Continua Medica) – ոլորտի մասնագետների շարունակական կրթությունն է, որի նպատակն է արդիականացնել նրանց գիտելիքները և հմտությունները՝ նոր բժշկական մեթոդների, թերապիաների և տեխնոլոգիաների ներդրմամբ: Վերապատրաստումը կարևոր է մասնագիտական որակի բարձրացման և լավագույն բուժման ապահովման համար:

20. Հիվանդության երկարատև կառավարում – (Administratio Morborum Chronicorum) նշանակում է քրոնիկական հիվանդություններով հիվանդների առողջական վիճակի հետևողական վերահսկողություն, պացիենտների և բուժանձնակազմի համագործակցություն, նպատակ ունենալով նվազեցնել հիվանդության բարդությունները և բարելավել կյանքի որակը: Այս մոտեցումը ներառում է պարբերական զննումներ, դեղերի կառավարում, առողջ ապրելակերպի խրախուսում և մշտական կրթություն:

21. Բժշկական տվյալների պաշտպանության համակարգ (Systema Protectionis Datorum Medicinalium) – նպատակ ունի ապահովել հիվանդների անձնական առողջապահական տեղեկատվության գաղտնիությունն ու անվտանգությունը: Այս համակարգերը պահպանում են բժշկական գրառումները, կանխում տվյալների անօրինական օգտագործումը, և հետևում տվյալների պահպանման նորմերին՝ համաձայն օրենքների և միջազգային չափորոշիչների:

Իրավաբանական լատիներեն տերմիններ

1. Ex officio – «Պաշտոնապես», նշանակում է, որ ինչ-որ գործողություն կատարվում է որևէ պաշտոնատար անձի կամ հաստատության կողմից իրենց պաշտոնական դիրքից ելնելով, առանց լրացուցիչ պահանջների:
2. In vitro – «Փորձարանական պայմաններում», օգտագործվում է հատկապես կենսաբժշկության մեջ, երբ ինչ-որ բան տեղի է ունենում խողովակում (օրինակ՝ պտղաբառարանների միջավայրում):
3. In vivo – «Անկողմում», օգտագործվում է փորձերի կամ գործընթացների մասին խոսելու համար, որոնք տեղի են ունենում կենդանի օրգանիզմում:
4. Post mortem – «Մահից հետո», նշանակում է այն գործընթացները կամ հետազոտությունները, որոնք կատարվում են անձի մահից հետո (օրինակ՝ մահվան պատճառի հետազոտություն):
5. A priori – «Առաջին հերթին», նշանակում է՝ ինչ-որ բան տեղի է ունենում կամ մտածվում է մինչև որոշակի փորձնական կամ հետազոտական գործընթաց:
6. Status quo – «Անփոփոխ վիճակ», օգտագործվում է որոշակի համակարգի կամ պայմանների նկարագրման համար, երբ դրանք մնում են նույնը:
7. Caveat emptor – «Ամենաքիչը պետք է ուշադրություն դարձնել գնորդին»՝ օրենքի սկզբունք, ըստ որի գնորդը պատասխանատու է ապրանքն ուսումնասիրելու համար, նախքան այն գնելը:
8. Corpus delicti – «Պատահականություն կամ հանցագործության մարմին», օգտագործվում է քրեական իրավունքի մեջ՝ referring to the physical evidence of a crime.
9. Actus reus – «Հանցագործության գործողություն», որ վերաբերում է մարդու գործողություններին կամ բացակայությանը, որոնք հանգեցնում են հանցագործության:
10. Mens rea – «Հանցագործ մտադրություն», ըստ որի հանցագործության համար պետք է, որ մարդը նաև մտադրություն ունենա գործողություն կատարել:
11. De jure – «Օրինականորեն», նշանակում է՝ ըստ օրենքի կամ իրավունքի:

12. De facto – «Փաստացիորեն», նշանակում է՝ ըստ իրավիճակի կամ գործնականում:

13. Sub judice – «Քննության տակ» կամ «Դատական քննության մեջ», օգտագործվում է, երբ հարցը կամ գործը գտնվում է դատարանում և դեռ չի որոշվել:

14. Habeas corpus – «Մարմնի ազատություն», իրավական պահանջ, որը ենթադրում է, որ անձը պետք է ազատորեն պահվի, եթե նա պահվում է ապօրինի:

15. Prima facie – «Առաջին հայացքից», նշանակում է, որ ինչ-որ բան ընդունվում է որպես ճիշտ առանց հավելյալ ապացույցների՝ բացառությամբ դրա հակառակի ապացուցման:

16. Pro bono – «Համառոտ հսկում», դա իրավաբանի կողմից անվճար ծառայություն մատուցելու գաղափարն է:

17. Nolo contendere – «Որպես ի հակառակ», այն նույնացնում է բացատրություն, երբ մեղադրյալը չի ընդունում մեղքը, սակայն նաև չի մերժում այն:

18. Stare decisis – «Պահպանել նախորդ որոշումը», իրավաբանական սկզբունք, որը ենթադրում է, որ դատարանը պետք է հետևի նախորդ դատարանների որոշումներին նույնատիպ դեպքերում:

Լատիներեն տերմինները հաճախ օգտագործվում են տարբեր փաստաթղթերում՝ սկսած դատարաններից մինչև բժշկական զեկույցներ, և դրանք հաճախ դառնում են առավել հայտնի բարձրաստիճան մասնագետների կողմից, որոնք աշխատում են իրավաբանական կամ բժշկական ոլորտներում:

Միրով կնդուներք այն դիտողություններն ու առաջարկությունները, որոնք կնպաստեն զիրքը հետագայում մշակելուն և կատարելագորելուն: